



ԳԱՐԻՒԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ  
“ԳԵՂՉՈՅ”

Ա. Տէ՛ռ - ԳԵՂՉՈՅՆ ԱՐԵՎ

(Հրատարակութիւն «Գեղարվեստ» հանդիսի)

Աշխանքը յատկացվում է Պետքի ուժամբ



Կակուլի

Պէտք

891 99 092 21
S - 38

13 APR 2011

Հ26-52

2092 Սովորություն  
8



ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ  
„ՊԵՊՈՆ“

(Քննչական նշան)

«Էղ քու կոտրած ձեռքով չիս զրի»

Ա. Տեր - Գևորգյան

(Հրատարակութիւն «Գեղարվեստ» հանդիսի)

Արդիսմբ յատկացւում է Պեպօն արձանին

14 SEP 2013

71.273

Ն Ռ Հ Բ Ռ

ՍԻՐԵԼԻ ՅՈՎԿԱՆՆԵՍԻՆ

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ց



16636-58

**Գ**արրիկ Սունդուկեանցի երկերի  
գլուխ գործոցը նաև մեր թատերագը-  
րութեան գլուխ գործոցն է։ Մեր աղ-  
քատիկ ու աննշան թատերական գրա-  
կանութեան մէջ «Պէպօն» մի անզու-  
գական գոհար է, որի նմանը դեռ ևս  
չի տուել մեր գեղարուեստական գը-  
գրականութիւնը։ Եւ «Պէպօն» մնում  
է դեռ մինչեւ այսօր էլ մեր բեմի գուտ  
գեղարուեստական ստեղծագործութիւն-  
ներով աղքատիկ ու պեղերտուարի ինք-  
նուրոյն զարդերից ամենափայլունը\*):

«Պէպօն» նիւթն ևս բղխում է Սուն-  
դուկեանցի պիեսների ընդհանուր աղ-  
քատիկներից։ Վաճառական դասի նոյն  
մութ ու գարշ մթնոլորտն է դրա հիւ-  
սուածքի շրջանակը։ Սակայն «Պէպօն»  
մէջ մի նոր տարր կայ։ Այստեղ հա-  
կառակ հեղինակի նախկին պիեսների՝

\*.) «Պէպօն» առաջին անգամ ներկայա-  
ցուել է 1871 թ. ապրիլի 30-ին։ «Պէպօն» քըն-  
նադատութիւններից մեզ յայտնի է միայն  
լէօինը «Ծուսահայոց գրականութիւնը»։

Ա. 8.-9.

գիշատիչ վաճառականի դիմաց կանգ-  
նող հակառակորդը ստորին խաւից է:  
Դա ոչ թէ նոյն վաճառական դասի  
ապականութիւնից քիչ թէ շատ մա-  
քուր մնացած դէմք է, կամ թէ նորերից  
կրթութեան համն առած սերնդի մտա-  
վախ, կամազուրկ ու սեղանեօր ներ-  
կայացուցիչ, այլ բոլորովին անուշա-  
դրութեան մատնուած, արհամարհուած  
ու անարգուած ժողովրդի, ստորին  
խաւի մարդ:

Սունդուկեան կարող վարպետի նուրբ  
սրախօսութեամբ ու գիտութեամբ քըն-  
նել է այն միջավայրը, որից վերցրել  
է իր հերոսին: Նա առաջինն է, որ մօ-  
տենում է այն դասին, որ պաժարնի,  
լօթի և մեծ մասամբ կինտո արհա-  
մարհական անունով է յայտնի: Նա  
հասարակութեան բարձր շրջանների բա-  
րոյական ամայութեան մէջ իր ներշնչ-

ման ու ոգեւորութեան համար դրա-  
կան, ազնիւ ու պայքարող անձնաւո-  
րութիւններ չը գտնելով՝ իշնում է  
դէպի ցածր դասակարգը իսկական սը-  
տեղծագործութեան համար գեղարուեա-  
տական թագուն մնացած, անյայտ  
գանձեր փնտուելու: Եւ այստեղ, այդ  
անարգուած խաւի մէջ նա աւելի մաք-  
րութիւն, աւելի ազնութիւն ու ճշշ-  
մարտութիւն է գտնում՝ քան փար-  
թամութեան ու արտաքին փայլի և  
հեղտանքի մէջ լողացող գիշատիչների  
վոհմակի և սրանց շրջանի մէջ, նա  
տարբում, յափշտակում է այդ մո-  
ռացուած աշխարհի փայլուն դէմքով և  
իր ամենագեղեցիկ պիեսի հերոս դարձ-  
նում: Նրա պիեսը անչափ բարձրա-  
նում է շնորհիւ կինտոյի այդքան լաւ  
ուսումնասիրած, խոր մտածած ու գե-  
ղարուեստօքէն հրաշակերտած տիպի:

«Պէպօի» նիւթը բաւական պարզ է:  
Սովորական խեղճութեան մի տխուր  
պատկեր է այդ: Մի աղքատ ընտանիք  
երեք անդամից—ձկնորս Պէպօն, իր  
մայրը Շուշանն ու քոյր կէկէլը: Բոլորն  
էլ հաւասարապէս գիշեր-ցերեկ տքնում  
են մի կտոր չոր հացի համար որով-  
հետև «խեղճի հացը էժան չի ճարւում»:  
Բայց ամենից շատ չարչարւում է նա,  
որի վրայ է ծանրացած տան ամբողջ  
հոգսը: Պէպօն յաճախ գիշերներով  
տուն չի գալիս,—ձմեռը ցրտից ոռ-  
նում, ամառը արեգակի տակ շոգում,  
այրում ու խորովում,—այս բոլորը  
միայն արդար ու հալալ մի կտոր չոր  
հացի համար: Պէպօն, ինչպէս և մայրը  
շատ գոն են իրենց վիճակից, որ գո-  
նէ իրենք այդ ցամաք հացը ողջ առողջ  
վայելում են հանգիստ: Սակայն Պէպօն  
մի մէծ հոգս ունի: Նա հասած քոյր

ունի, նշան դրած, սարդու տալու:  
Փեսան ետ է քաշըում, որովհետեւ 100  
թուման օժիտը կանխիկ փող չէ, այլ  
գաւի դառարա: Դա մուրհակով է,  
դէն շպրտուած: Նրա ձեռը պակաս է:  
Նա կատաղում է. բայց ոչ թէ փէսի  
վրայ, ոչ ազնիւ ու շիտակ Պէպօի  
կարծիքով փեսան իրաւունք ունի,—  
այլ իր անձարութեան վրայ: «Խոստա-  
ցել ես՝ տոնը» ահա տանջողը, շիտա-  
կութեան այդ անօղոք հրամանն է նը-  
րան խեղդողը: Եւ այն էլ հէնց այդ  
օրը տոնը: Պարտատէր հարուստ վա-  
ճառական Արութին Զիմզիմովը հաս-  
տատ չիմանալով, որ մուրհակը կորել  
է՝ ձգձգում է. իսկ վերջինս էլ չըկայ  
ու չկայ: Վերջապէս Պէպօն որոշում է  
մի անձար, անյոյս քայլ անել, այն է  
պարզ յայտնել, որ մուրհակը կորել է  
և կոչ անել վաճառականի խղճին, որի

գոյութեան դժուար թէ նա հաւատում  
էր: Սա հարկադրւած էր, անել ու շըշ-  
մեցնող դրութիւնն էր ստիպում նրան  
անել այդ քայլը: Եւ, ինչպէս սպասելի  
էր, Ար Զիմզիմովը հէնց որ իմանում  
է հաստատ, որ մուրհակը կորած է,  
ուրանում է որփող է պարտ. դրա փո-  
խարէն ողորմութիւն էառաջարկում: Որ-  
պիսի հեգնանք անզօր խեղճութեան: Պէ-  
պօի մաքուր և վիրաւորուած ինքնասի-  
րուութիւնը շպրտում է այդ կօպէկնիրը  
անյագ գայլի երեսին, և ծառաներից  
դուրս արւում այդ օտար տեղից:  
Սակայն իրերի դրութիւնը փոխւում  
է յանկարծ՝ փոխելով իր հետ և դերե-  
րը: Մուրհակը գտնուում է: Այժմ խեղ-  
դողը զոհն է: Պէպօյի հայրը մահուա-  
րից մի երեք օր առաջ յանձնել էր  
այդ իր ազգական Գիգօյին և այդ ոչ  
ոք չը գիտէր: Սա էլ իր արկղում

պինդ պահում էր մինչև կէկէլի ամուս  
նանանալը. և մի օր բաց է անում  
ու տեսնում, որ չկայ այդ թանգագին  
«ամանաթը», որի հետ մի խեղճ բախտ  
էր կապուած: Գիգօլի համար տան-  
ջանքի օրեր են սկսում. մանաւանդ  
երբ նա տեսնում է այդ ընտանիքի  
ցաւալի վիճակը: Որքան էլ նա թագ-  
ցնում էր, բայց հենց այդ աւելի էր  
տանջում նրան: Վերջը նա, այդ պար-  
տաճանաչ ծերունին գրաւ է զնում իր  
տնակը, որ ստացածը տայ Պէ-  
պօին: Մուրհակը ճարւում է այն կը-  
րիտիքական ըոպէին, երբ Պէպօին  
Զիմզիմովին անարգելու պատճառով  
բանտ են տանում: Ինչպէս ասացինք  
այդ անակնկալը փոխում է դերերը:  
Այժմ խեղճացածն ու աղերսովը այդ  
անյաղը ու իր կեանքում ոչ ոքի ա-  
ռաջ մէջը չը խոնարհած Ար Զիմզի-

մովն է: Նա հաշտութիւն է խնդրում,  
և ումնից, իր զոհից: Դառն, կօմիքա-  
կան դրութիւն: Բայց անակնկալը իրա-  
դարձութիւն առաջացնում է միայն  
դերերի մէջ և ոչ գործողութեան:  
Գործողութեան ընթացքը մնում է նոյ-  
նը: Պէպօն անհաշտ էր, երբ գեռ չը-  
գիտէր ոչինչ մուրհակը գտնուելու  
մասին. և անհաշտ էլ մնում է, թող-  
նելով որ մի անգամ սկսուածը շարու-  
նակուի, որպէսի մերկացնի հասարա-  
կութեան առաջ այդ հրէշի ողջ այլան-  
դակութիւնը: Եւ նա հանգիստ գիմում  
է դէպի բանտ, որով և վերջանում է  
պիեսը:

Ո՞րն է այս պիեսի հիմնական, դե-  
կավարող գաղափարը:

Առաջին տպաւորութիւնից թւում է՝  
թէ դա ճշմարտութեան յաղթանակն  
է, որով մեղաւորը իր արժանի պա-

տիժն է կրում, կամ այս պիեսի մէջ  
պիտի կրի: Սակայն այս մի շատ մա-  
կերեոյթային եղրակացութիւն կը լի-  
նէր: Կարո՞ղ է այդ պիեսի մէջ առաջ-  
նորդող գաղափարը ճշմարտութեան,  
արդարութեան յաղթանակը լինել, որ  
լոկ մի պատահական դիպուածք, մի  
անակնկալ հետևանք է: Զէ որ մուրհա-  
կը կարող էր և չը գտնուել: Արդա-  
րութեան յաղթանակը պատահականու-  
թեան յաղթանակը չը պիտի լինի:  
Ղեկավարող գաղափարը պէտք է անց-  
նի ամբողջ պիեսի մէջ, պատճառի ու  
հետևանքի կապակցութեան մէջ դնի  
նրա տարբեր մասերը, իրար հետ,  
ամեն ինչ՝ թէ հերոսներին և թէ գոր-  
ծողութեան՝ իր շուրջը պատեցնի: Նա  
պէտք է մի նկատելի թէ անսկատ յօդ  
լինի դրամային հանգոյցի, գարգաց-  
ման և թէ լուծման մէջ: Արանք պէտք

է պատճառաբանուին ու պայմանաւորուին պիեսի հիմնական գաղափարով։ Արդ, եթէ մենք ճշմարիտ յաղթանակն ընդունենք, որ միայն մի դիպուածական իրադարձութիւնից է բղիում և որը վերջին արարուածում է միայն կատարում։ Ի՞նչպէս պէտք է այդ հաշտեցնենք ամբողջ նախընթաց գործողութեան հետ։

Հանգոյցն ու գործողութեան զարգացումը - յայտարարներ պիտի լինին հիմնական գաղափարի համար, զոնէ դրա սաղմը պիտի կրեն իրենց մէջ։ Այս մենք չենք տեսնում «Պէտօի» մէջ։ Կոյր դիպուածի ու պատահականութեան մէջ հիմնական գաղափար դնել և որոնել չի կարելի։ Այդ պէտք է փնտռել պիեսի ընթացքի, տոնի մէջ։ «Պէտօի» հիմնական գաղափարը կապուած է իսկական զոհի, Կէկէլի հետ,

և ոչ թէ միջնորդականի, Պէտօի հետ։ Այդ պէտք է տեսնել Պէտօի հետևեալ խօսքերի մէջ, որ նա լի ցասումով և դառնութեամբ խփում է Զիմզիմովի երեսին, (երբ վերջինս հաշտութիւն է առաջարկում), ցոյց տալով քրոջը։

Հիմմա հաշտուինք, հիմմա, Բայց սրան ինչ ես ասում, սրա մօտ ի՞նչպէս ես հաշտուում, սադ-սադ գերեզման դրեր, օրն ու ումբը խաւրեցրիր, կեանքը հարամ արիր, ի՞նչպէս ես հաշտուում սրա հետ, ի՞նչպէս ի՞նչպէս ես յետ տալիս սրան ինչ որ խլեցիր սրանից, ի՞նչպէս։ Քո ողջ հարստութիւնն էլ չի կարող լաւացնել այն վէրքը, ի՞նչպիսին դու բաց արիր սրա սրտումը։

Ահա թէ որն է այդ պիեսի այնքան խոր, հոգեբանական այնքան նրբութեամբ արտայայտած հիմնական գա-

զարափը։ Այդ «այն վէրքն» է, այն անպատճութիւնը, այն վիրաւորանքն է, որ կրել է Կէկէլը Արութիւնի իր պարտքն ուրանալու պատճառով։ Այդ «վէրքը» սրտի ցաւոտ վէրքն է, որ հասցրել են դեռատի, իր մաքուր անունով միայն ապրող հայ աղջկան։ Այդ մաքուր, անբիծ անունից զատ նա ուրիշ հարստութիւն չունէր, և այդ անգին գանձը նրանից «խել», յափշտակել են, —մի կորուստ է որ ոչնչով փոխարինել չի կարելի, որի յափշտակողը Պէտօի անհաշտ թշնամին է։ Եւ սրա համար է գլխաւորապէս որ Պէտօն անհաշտ է մնում Զիմզիմովի հետ։ Նրան կատաղեցնում է ոչ թէ այն որ Արութիւնը իր պարտքը ուրացել էր և որ մուրհակը գտնելուց յետոյ է է միայն կամենում վճարել ոչ, նրա համար կարեւորը այդ ուրանալը և անձ-

նական վիրաւորանքը չէ, այլ այն զրկանքը, «վէրքը», որ նա հասցրել է իր հարազատին, սիրած քրոջ մատաղ, քնքուշ սրտին։ Ոմեն բան նա պատրաստ է տանել, մոռանալ ու հաշտուել իր թշնամու հետ, բայց նա մոռանալ անկարող է քրոջ վիրաւորանքը։ Ասելով՝ թէ «ի՞նչպէս ես հաշտուում սրա (Կէկէլի) հետ» նա աւելի է բնորոշում այդ դրութիւնը, որ իրենից կախուած չէ այդ հաշտութիւնը, որ ինքը կամենայ էլ իրաւունք չունի հաշտուելու։ Այդ հաշտութիւնը Կէկէլի հետ պէտք է կատարել, որ նախ՝ արդէն ուշ է, ապա և անհնարին, —նրա հետ, որի վրայ և գլխաւորապէս ծանրացրել է Զիմզիմովի ստոր արարքը, ի՞նչպէս ետ տալ նրան ինչ որ խել է Արութիւնը, —«ի՞նչ ո՞ր խլեցիր»։ ահա այդ անօրինակ, այդ խոր վէրքը, որ ոչնչով, բացարձակ

ոչնչով չի կարելի բուժել—ահա պիեսի  
դեկավարով, վերջը բաւական անորոշ,  
մշուշային մնացած գաղափարը, որին  
և լուծումն ու մանաւանդ վերջաւորու-  
թիւնը շատ էլ չի գոհացնում, ուղղակի-  
չի համապատասխանում: Եւ այդ ա-  
նորոշութեան, այդպիսի վախճանի նոյն  
իսկ մի տեսակ անբաւարարութեան  
պատճառը կէկէլի ստացած «վէրքի»  
անբուժելիութիւնն է, մեղաւորի կողմից  
յանցանքի անքաւելի լինելը՝ թէկուզ  
սա իր ամբողջ հարստութիւնը մէջ  
տեղ բերի, ինչպէս շեշտում է Պէպօն:  
Այս նուրբ դրութիւնը թւում է թէ  
զգացել է և ինքը հեղինակը իր դրա-  
մային վերջնական լուծում չը տալով:  
Ի՞նչ պէտք է տար այդ վախճանը, որ  
մեղ համար շատ պարզ է, բացի այն,  
որ Զիմզիմով անուն հրէշը կըստանայ  
իր բարոյական (!) պատիժը և անշա-

հասէր Պէպօն իր մի քանի թուման  
ստանալիքը: Այսպիսի վախճանը գո-  
հացուցիչ և սպեղանի կը լինէր այդ  
«վէրքին»: Ոչ և երբէք ոչ: Սրաի վէր-  
քի սպանիչ մոմուռի ջերմ հեծեծանք-  
ներն ու անարդ մետաղի սառն զլնգ-  
զընգոյները շատ, շատ հեռու են իրա-  
լից: Դա մի ծանր, անօրինակ ծաղը,  
մի բիրտ հեգնանք կը լինէր այդ վի-  
րաւոր սրտի համար: Եւ հեղինակը  
զգալով այդ, վախճանի վրայ լոկ մատ-  
նանիշ է անում և ոչ կանգնում: Սը-  
րանով նա լոելեայն ցոյց է տալիս,  
որ թումաններ ետ ստանան ու Զիմ-  
զիմով գաղանի պատիժն ևս լոկ հե-  
տեանքներ են մի անակնկալի, ուրիշ  
ոչինչ:

Եւ Սունդուկեանց շատ լաւ զգացել է  
այս տեսակէտից իր պիեսի այգպիսի  
վախճանի անարժէք լինելը, որ դրա-

նից հիմնական գաղափարը ոչինչ չի  
շահուի, որ դա երկրորդական է և ըս-  
տինքեան հասկանալի, ուստի և առ-  
կախ է թողել:

Պիեսի գործող անձերը երկու խմբի  
են բաժանում—գրական և բացասա-  
կան: Առաջին կարգին պատկանում են  
Պէպօի ընտանիքը, ընկերը, իսկ երկ-  
րորդին՝ վաճառականի ընտանիքը:

Վէպի գլխաւոր հերոսը գրական տիպ  
է, գաղափարական Պէպօն, որ ժողո-  
վրդի ստորին խաւի ներկայացուցիչ է:  
Սունդուկեանի գէմս Պէպօի, ցոյց տուեց  
հասարակութեան այն մակերեսոյթային  
սխալ համոզմունքը, որ նա ունէր կին-  
տո դասի վերաբերմամբ, իր՝ կինտո  
բառը համանիշ էր անպայման սրիկայ,  
իրը և ստահակ բառերի: Նա իջաւ  
Պէպի այդ արհամարուած ու մոռացուած

դասը, գէպի այդ կեանքի յատակում  
եղածները, գէպի այդ հասարակ, ցածր,  
վատահամբաւ մարզիկ, ապրեց գրանց  
խոհերով ու զգացմունքներով, մտաւ  
նրանց դրութեան մէջ, սիրեց նրանց և  
մեղցոյց տուեց որ նրանց մէջ ոչ միայն  
գրական, աղնիւ ու համակրելի անձնա-  
ւորութիւններ կան, այլ և որ այդ ա-  
նարգուածների ու արհամարհուածների  
մէջ աւելի մեծ բարոյականի տէր ան-  
հատներ կան՝ քան թէ մեր կեղծ բա-  
րեպաշտ և նիւթականով միայն բարձր  
դասի մէջ: Եւ իբրև զըանց կատարե-  
լատիպ նա տալիս է մեզ Պէպօի հրա-  
շալի կերպով նկարուած տիպը: Պէպօն  
իր վիճակից գոհ է, իր հալալ աշխա-  
տանքը սիրող և դրանով երջանիկ մէկն  
է: Իր արհեստի նկարագրութեան մէջ,  
որ նա անում է Գիքօին, սուրբ աշ-  
խատանքի քաղցրահնչիւն երգն է լըս-

ուում: Նա ուրախ է, զուարձասէր և սրախօս, իբրև կինտօ: Պէպօն անօրինակ է իր ազնւութեան ու շիտակութեան մէջ: Նա իր խօսքի տէրն է. նա երբէք չի պախարակում փեսային իր քրոջը թողնելու համար. թէն սկզբում բնականօրէն մի քիչ զայրանում է, բայց երբ սառը, լուրջ մտածում, կշռադատում է, դառնումէ դէպի ինքը և ասում,—Զէ, Պէպօ դուն հալալ տըղայ են, հալալութիւնը սիրում ես, քո բանումն էլ հալալ կաց, եթէ ուրիշներից ազնւութիւն ես պահանջում, ինքդ պէտք է ազնիւ, հալալ լինիս:—Խոստացել ես, պիտի կատարես քո խօսքը, ինչպէս էլ որ լինի՝ թէկուզ կաշիդ քերթելով, թէկուզ հոգիդ տալով—ահա նրա համոզմունքը: Այդ պատուհաս օժիտը, դրա հետ կապուած անպատութիւնը իր հասակակիցների

մէջ նրա համար մի ցաւալի, ծանր դրութիւն են ստեղծել, որից ոչ մի ելք չի գտնում. բացի որ մի անյոյս փորձ էլ անել, վերջին անգամ դիմել պարտատէր ճիւաղի քարացած սրտին: Նա հարկադրուած, անճարացած է, անում է առանց իր արժանապատութեան, իր ինքնասիրութեան մի մազաչափ անգամ դիմչելու, առանց ստորանալու: Դրանից առաջ նա արտասանում է իր հրաշալի մենախօսութիւնը, պիեսի ամենաչքնաղ, ամենագեղեցիկ կտորներից մէկը. (գրական լեզուի վերածած):

«Գնա, Պէպօ, գետինը լիզիր, մարդկանց ոտները համբուրիր, նրանց ոտի ցեխը կեր: Ո՞վ ես դու, ինչ ես դուն, մարդկանց հաշւում ինչ անուն ունիս դու, երբ կուզեն՝ ոտի տակ կը հաւասարեցնեն. ինչ վնաս, ճանձիր ինչով

ես աւել: Դու հօ մարդ չեն, մարդկանց համար քեզ կերակուր է ստեղծել Աստուած: Գիշերը չարչարութիր, ցերեկը չարչարութիր. երկնքի տակ լուսացրնւ, անձրւի ու քամու հետ կոռւթիր: Զմեռը ցրտից ոռնա, ամառը արեգակի շոգում այրութիր ու խորովութիր: Գնա այդպիսի մի կտոր հաց ճարիր ու այդ կտոր հացով մօրըդ ու քրոջդ պահիր... Այս ինչ, ինչ մարդութիւն է... այսպէս շունը էլ է ճարում մի պատառ, որ տունը պահում է, դու էլ ասես, շուն ես. քանի աշխարհիս երեսին ման ես գալիս, դու էլ շան պէս կերակըրութիր, այս ինչ մարդութիւն է: Մարդ էիր ուզում դառնալ՝ կը գնայիր մարդ կը կողոպտէիր, գողութիւն կանէիր, ինձ նման խեղճերին կը զրկէիր, քսան ու հինգ հազար տեղ արիւն արտասունք թափել կը տայիր, այն արտա-

սունքները փող կը շինէիր և այն փողով ոսկի տների մէջ փառաւոր ման կը գայիր. կառքեր, ձիեր կը սարքէիր, քսան ու հինգ ինձպէսին ծառայ կը կանգնեցնէիր, այ, այն ժամանակ կասէի քեզ մարդ ես, Պէպօ, ինչ հարկաւոր է մարդուն, ինչ քէֆդ կուզէր՝ նոյն ժամին կը ճարէին, այն ժամանակ ամենքը քեզ գլուխ կը տայիր, կը մեծարէին, պատիւ կը տայիրն ու միմեանց գլուխ կը կոտորէին, որ քու աչքը նրանց վրայ քաղցր լինի»\*:

Ահա կոշտ ու կոպիտ, դառն իրականութեան խոհերով լի այս որքան պարզ, նոյնքան հրաշալի մենախօսութիւնը որ մի թունաւոր ու անզօր բողոք է խուլ, բայց բուռն զայրոյթի ու դժգութեան կծու և ցասկոտ շեշտերով

հակասութիւններով, անարդարութիւններով ու պարագօքներով լի կեանքի դէմ, ուր ամեն ինչ հակառակն է, ոչ իր տեղը և դիրքի մէջ, ամեն ինչ գլխիվայր: Եւ այդ սուր, շեշտակի ոճը այդ հրամայականները աւելի գեղեցիկ են բնորոշում Պէտօի դրութիւնը. այդ դրութիւնն է հրամայում նրան—«Գնալիզիր, համբուրիր, ցեխը կեր» և այն, և այլն: Եւ այս ըստ իմաստի ստորացուցիչ բառերը Պէտօի բերանում այնքան վեհութիւն, այնքան մաքուր վեհանձնութիւն են պարունակում:

Նրա այդքան նուրբ ու լուրջ դրութիւնը այնուամենայնիւ նրան անպատուաբեր քայլ անել չի տալիս, նա չի ընկճում և այդ գէպքում հէնց չարագործի երեսին չարագործ է ասում: Պէտօն պատրասաւում է բանտ գնալով:

Իի բաները, ինչպէս ասում է իր վերջին մենախօսութեան մէջ: Այսուղի երկում է նրա ազնիւ, ճշմարտասէր ու ջինջ հոգին որ արդար ու ուժգին զայրոյթով լցւում է աշխարհի օրէնքի հասարակական կարգերի դէմ, որոնք ամեն օր հազարաւոր ապօրինութիւններ ու այլանդակութիւններ են ծնում: Նա կատաղում է՝ թէ ինչպէս ոտից մինչեւ գլուխ արդար լինիս և գարձեալ սուտ դուրս գաս. ինչո՞ւ, որովհետև աշխարհը լի է մարդարկերպ գայլերով՝ իսկ դու ոչ մի ուժ չունիս, լինի գա փողի, խելքի, թէ գրչի: Նա բողոքում է՝ թէ ինչո՞ւ է ինքը այս գայլերի աշխարհում գառը ծնուել, որի տեղը սպանդանոցն է: Նա մի անգօր, անձար զոհ է, որ շատ լաւ գիտակցելով իր անզօրութիւնը գնում է զոհուելու գնում է դէ-

պի կեանքի սպանդանոցը, բայց անվհատ ու յաղթական քայլերով: Նա դառն ժպիտով ու թունալից հեգնանքով է ողջունում այդ կրկնակի դժբախտութիւնը: Պէտօի վեհանձնութեան մի ապացոյց և այն, որ նա իր յարկի տակ չի դիպչում իր թշնամուն՝ այն մարդուն, որ նրան ծառաներով էր հալածել տանից և երբ կակուլին, Պէտօի ընկերը, որ միակ ոկպիտ դատաստանով է ուզում սիրտը հովացնել, Պէտօն արգելում է՝ ասելով՝ թէ «Էղմարդութիւն չի». Նա աւելի է բարձրանում մեր աչքում նրանով, որ երբ Ար. Զիմզիմովը պարտքի կրկնակին է առաջարկում՝ նա մերժում է այդ լաւութիւնը, նա անհաշտ է մնում—«այնքանից յետոյ», մանաւանդ որ նա չը գիտեր մուրհակի գըտնուելու մասին: Եւ նա աւելի է հաստատուում

իր որոշման մէջ, երբ իր ձեռքին գէնք, ոյժ է ունենում—մուրհակ: Իթէ նա միջակութիւն լինէր՝ պէտք է ասէր. —«տնուր ինձ իմ կոպէկնէրը և Տէրը քեզ հետ». բայց նրա համար կարեռը փողը չէր, այլ իր քրոջ պատիւր, այն, ինչ որ «Խւել էր» Արութիւնը: Եւ նա այժմ գիտէ իր անելիքը, իր գերը: Խեղճի գլխիկոր անզօրութիւնն ու հարստի ուժի և իրաւունքի գերերը փոխուել են: Պէտօին, Զիմզիմովի բոլոր զոհերից ամենից շատ տանջուածին է վիճակուած մերկացնել այդ հասարական հրէշի էութիւնը, որը հարստացել, յղփացել ու ճարպակալել է Պէտօնի, հազարաւոր թշուառների թալանելով, դրանց արիւն-քրտինքով դառն արտասունքներով: Եւ այդ կողոպուտով իր կրքերին է բաւականութիւն տալիս, իրենից երկու անգամ փոքր կնոջ

քմահաճոյքներին ծառայեցնում. նրա  
ժպիտին արժանանալու համար նա  
պատրաստ է ոչ միայն իր տարիքը  
կեղծելու—մազերը ներկելու և այլն,  
այլ և հարազատ քրոջը մերժելու.

Եւ այդ ճիւազը ինքն է նկարում իր  
դէմքի հրէշային գծերը, որ մի գրօշի  
համար հոգին տալիս է», որ չը գիտէ  
թէ ինչ բան է խիղճը.—«սրտի դաւ-  
թարը ո՞ւն է», որի համար պարտը  
միայն այն դէմքում է պարտը, եթէ  
թղթով, կնքով հաստատած է... եթէ  
մարդիկ գիտեն. —«ով գիտէ, որ պարտ  
եմ» կամ՝ «եթէ պարտ եմ» ինչու մուր-  
հակ չունի» և այլն, և այլն: Եւ այդ  
ճարպիկ աղուէսը զարմանում է թէ  
ինչպէս է, որ իր՝ գիւային ստամոքսը  
այնքան յայտնի թէ անյայտ կլանու-  
մներից յետոյ՝ այս մէկին էլ չի կա-  
րողանում մարսել. —«Այնքան բաներ

մարսեցի ու կուժը էս մէկի վրայ է  
կոտրում էլիս: Սակայն բանը միայն  
քանի թումանից զրկուիլը չէ, զրու-  
թիւնը աւելի նուրբ է: Գայլի դիմակը  
պատռում է: Նա հէնց նոր է դատա-  
րանի առաջ երդուել, որ ոչինչ պարտ  
չէ, իսկ այժմ այդ ժերկնային պատիժ»  
մուրհակը, ինչպէս ինքն է անուանում  
այլ բան է ասում: Նա սոսկում է այս  
մերկացումից: Հասարակութիւնը վեր-  
ջապէս պիտի ճանաչի իր վամպիթ ան-  
դամին: Եւ այս խայտառակութիւնից  
խոռափելու համար նա պատրաստ է  
մէկին երկու վճարելու, որովհետև «իր  
հախն է», միայն թէ հաշտուի: Դրա  
համար սկսում է բանեցնել իր աղուէ-  
սի լեզուն, խոստումներ ու լաւութիւն-  
ներ առաջարկել, բայց ի զուր: Պէտօն  
ժայռից հաստատ է: Նա գիտէ որ այդ  
փողը պէտք է ստանայ, նրա համար

կարեռը այդ չէ: Նրա դերը միայն իր  
անձնական և ընտանեկան հաշիւների  
շուրջը չի դառնում: Նա հասարակա-  
կան դեր էլ ունի կատարելու, ինչպէս  
մի անգամ արդէն շեշտեցինք: Նա նաև  
մի հասարակական մարտիկ է: Ի դէմս  
նրա՝ ոտնահարուած ճշմարտութիւնը  
պիտի յաղթանակի: Պէտօն իրեկ հե-  
րոս զգում է այդ. Նա զիտակցում է  
իր պարտականութեան և այդ կողմը,  
որի համար, ինչպէս ինքն է ասում,  
պատրաստ է ոչ միայն բանտ նստելու,  
այլ և «հորում կը նստեմ, հորում»:  
Այս խօսքերը նրան այնքան բարձրաց-  
նում են իրը ոչ միայն ընտանիքի, այլ  
և հասարակութեան լաւ անդամի, և  
ցոյց տալիս, որ Պէտօն անձնականի հա-  
շիւներով միայն ապրող մի տափակու-  
թիւն չէ, երկշոտ ու վախլուկ, այլ որ  
նա իբրև քաջարի, աննկուն մարտիկ,

հասարակական, ընդհանուրի շահերն  
էլ իր սրտին ոչ միայն նոյնքան մօտ  
է զգում, որքան և իրը, այլ և իր շա-  
հերից շատ բարձր համարում: Նա ան-  
հաշտ է մնում Ա.ր. Զիմզիմովի հետ,  
ուշադրութիւն չը դարձնելով, ոչ իր  
տան կարիքներին, ոչ այն հանգաման-  
քին, որ իր ընտանիքը իրենով է ապ-  
րում, և որ իր բացակայելը թշուա-  
ռութիւների լայն դուռ է բաց անում  
առ այժմ այդ տան համար, ոչ պա-  
ռաւ մօր ու քրոջ աղաշանքներին ու  
արտասունքներին, ոչ էլ սիրելի ընկե-  
րոջ թախանձներին—բանտ գնում իր  
նման չարատանջ զոների կողմից պատ-  
ժելու այն դահիճին, որի համար  
«խոճմտանքը դատարկ քամի է»: Մաս-  
նաւոր աղաշանքներն ու պաղատան-  
քները չը կարողացան ազդել Արութի-  
նի կարծրացրած ու ժանդուած սրտի



վրայ: Այժմ յարութիւն է առել զոհեր  
ըից մէկը, պատուելու հասարակութեան  
սոսկալի հրէշի դիմակը, որպէս զիրո-  
ւորը տեսնեն դրա տակ թագնուած  
բարոյական ամենայլանդակ պատկե-  
րի ամբողջ մերկութիւնը իր բնլոր  
գարշանքով, որպէսզի ցոյց տայ, որ  
յարգում և խոնարհում են մի մարդու  
առաջ, որի համար ոչ մի սրբութիւն  
չը կայ. — Մէկն էլ է իմաց չանի՞  
աշխարհին սրա արարմունքը, մէկն  
էլ է հարայ չը տանց որ էս մարդը,  
որին բոլորը գլուխ են տալիս, բոլորը  
մեծարում են, բոլորն յարգում ու  
պատում են... սա էն մարդն է, որի  
համար ոչ մի բան սուրբ չէ աշխար-  
հում»...

Պէտօից յետոյ դրական տիպերից  
երկրորդը կակուլին է, այդ երկրորդ  
Պէտօն կամ Պետօի կըտսեր եղբայրը,

նրա երկրորդ աստիճանը: Պէտօն ու-  
նի բնաւորութեան այն բոլոր լաւ  
գծերը, որ ունի կակուլին, մինչդեռ  
վերջինիս մի քանի խոշոր գծերով ետ  
է նրանից: Պէտօն կակուլիների մի հա-  
ւաքական տիպ է: կակուլիներով լիքն  
է մեր ժողովուրդի ստորին դասը, իսկ  
Պէտօներ շատ քիչ են, բացառիկ: Կա-  
կուլի. — դա մեր ժողովրդական այն  
կարգի բնաւորութիւններից է, որոնք  
ապրում են թոչունի պէս, գոն իրենց  
վիճակից, որոնք սիրում են միայն ի-  
րենց դասի մարդկանց, բայց անհաշտ  
են աղաների հետ, արհամարհում, ծաղ-  
րում, ատում են նրանց, յաճախ ան-  
գիտակից, բաւական անորոշ, թէկուղ  
բնական ատելութեամբ: Այսպէս կա-  
կուլին պախարակում է Պէտօին՝ թէ  
ինչու նա վաճառականի, այդ անարդ  
«կուպեցի» հետ է գործ բռնում, իր

դասի մարդկանց, պարզասիրու ու  
անխարդախ կինտօներին թողած: Կա-  
կուլի. — դա մի սրաբաց, անկեղծ, ան-  
շահասէր, բարձր անձնական հաշիւնե-  
րից և զերծ յետին մտքերից, պարզ  
ու շիտակ, մի անձնուէր ընկեր է, որ  
պատրաստ է ամեն կերպ բաժանել  
ընկերոջ վիշտն ու կարիքը՝ նախ նիւ-  
թակտնով, իր ունեցածով, որ մի գո-  
տի է, ապա և իր սիրած բուռնցքի  
դատաստանով, որ նա առանձնապէս  
սիրում է. իսկ այդ սէրը առաջցել  
է տարիներ շարունակ, ամբողջ կեան-  
քում անարդարութիւնների և աղա-  
ղակող ապօրինութիւնների գէմ անգօր  
գտնուելուց, որի համար և կակուլիները  
դիմում են անձարների միակ ինքնա-  
բաւարարութեան, միակ, թէկ կոպիտ  
դատաստանին, որ մի քիչ էլ է սրտի  
հովութիւն է տալիս կակուլիներին.

սրանց համար, ինչպէս Պէտօն է ա-  
սում, ամեն ինչ ։ մուշտի կուռվ է շի-  
նած: Եւ դրանք իրենց բնաւորու-  
թեան այդ պարզութեամբ ու մաքրու-  
թեամբ շատ ու շատ բարձր են կեղծ  
քաղաքակարթութեամբ կըթուածներից:  
կակուլիի մէջ աւելի ջինջ սիրտը,  
անխառն զգացմունքն է խօսում՝ քան  
սառն ու կշուադատող միտքը: Անար-  
դարութիւններն ու կեղծիքները նրա  
մէջ գարշանք են յարուցանում ամեն  
անգամ. և բաւական է մի թեթև մղում,  
բղխած ընկերական կամ ընտանեկան  
սիրուց և պարտականութիւնից, որ  
նրանք բռնկեն ու առանց երկար ու  
բարակ կշուադատութեան ամենաճ-  
նազո՞ն քայլն անեն: կակուլիները ար-  
տառոց գէմքեր, բայց միջակութիւն-  
ներ են, որոնք միայն մի որոշ շրջան,  
մի որոշ սահման են պայքարում և

պատրաստ են կօմպոմիսների, դրանք կարիք ունին առաջնորդութեան իբրև պատրաստի ուժերի, դրանք միայն զինւորներ կարող են լինել մարտիկի կոչում ունեցող, հերոսական ու հետեւողական կուող, անհաշտ ու աննկուն բացափեկ Պէտոների համար: Երբեմն են միայն այդպիսի հպարտ և ըմբոստ գլուխներ բարձրանում հասարակական պայքարի ընդհանուր մակերևոյթից:

Հոգով ու մարմնով կեղեքուածների մի թշուառ զոյդ են կազմում Պէտօի մայրն ու քոյրը: Շուշանը մի հոգատար մայր է, նահապետական հասկացողութեամբ, որի միակ հոգսը իր զաւակների բախտաւորութիւնն է. նա նոյնապէս գո՞ն է իր վիճակից, որ գո՞նէ հացի կարօտ չի քաշում, միայն թէ այդ հացը ողջ ու առողջ իւր զաւակների հետ վայելէ առանց ցնցումների:

Նա չի փափագում ոչ հարստութեան, ոչ պատուի: Նրա մտատանջութեան առարկան իր աղջկայ ներկայ դրութիւնն է, որի առաջ որքան նա շատ է զգում իր անզօրութիւնը՝ այնքան աւելի է տանջում: Այս խուլ տանջանքի առաջ աւելի ևս անզօր է դրամայի իսկական զո՞ն—կէկէլլ: Բացի իր անձնական վշտից ու անպատճութիւնից, որ փեսան թողնում է իրեն ընդհանուրի առաջ համբուրուելուց յետոյ, այս ամբողջ խայտառակութիւնից բացի, նրան ոչ պակաս տանջում է և իր եղբօր վիճակը: Նա գիտէ, որ Պէտօն այդքան յանդուզն և վտանգաւոր քայլեր իր համար է միայն անում, և այս զիտակ-շութիւնը ճնշում, հալում—մաշում է նրսն: Նա իրեւ անուս, անզէն, անպատրաստ և թոյլ հայ աղջիկ, այն էլ ստորին դասից, միանգամայն ոչ մի

ակտիւ դեր չունի իր վիճակի գործում: Կէկէլլ չէզօք է, նա ոչ մի զործ կատարել, ոչ մի քայլ անել չի կարող այնպիսի մօմենտում, որ իր բախտն են տնօրինում: Եւ նրան մնում է միայն լալ, յուսահատուել, իր ծնածօրն անիծել: Նրա միակ զէնքերը անվերջ արտասունքներն են: Եւ նա լալիս է, անիծում....

Այս երկու խեղճ արարածների դիմաց կանգնած է մօդայով ու կեղծ կրթութեամբ այլասերուած ու փառասէր էփեմիան—Ար. Զիմզիմովի կինը, որ իր տարափամոլոր ամուսնուց քմահաճոյքով, ժպիտներով ու լեզուական սիրով, իր սանձարձակ ցանկութիւնների ու հաճոյքների համար փող է կորզում: Զիմզիմովները միայն հեշտանքի համար են առատաձեռն: Էփեմիային փայլ, շուր, համբաւ, անուն

հարկաւոր: Նրա համար սէրը միայն մի միջոց է իր տեսչանքներին լիուլի բաւարարութիւն տալու համար: Եւ այսպէս հասակով անհաւասար, բայց բարոյապէս հաւասար ամուսինները իրավ խաբում, կեղծում են, որ իբր թէ նրանք սիրում են իրար: Եւ յանուն այդ անզուգական սիրոյ, Ար. Զիմզիմովը խաբում է նոյն իսկ ինքն իրեն, որ ինքը ջահէլ է: Եւ ձարպիկ էփեմիան ամենայն՝ բարեխղճութեամբ շարունակում է իր ցիսնիկ՝ շողքորութութեամբ օրօրել ամուսնու այդ ապշային ինքնախաբէութիւնը:

Պէտօից և կակուլիից յետոյ ժողովրդական յաջող անձնաւորութիւններից է Գիքօն: Սա նահապետական հասկացողութիւններով մի ծերունի է, որ փոշտոցներով է կշուռակ կեանքը, խիկարի իմաստութիւններով, նախա-

ինամութեամբ և Աստծու բղատողութեամբ է բացատրում այդ կեանքի կնճռոտ խնդիրները. ուստի և քարոզում է լուռ, հլուռ, հնագանդ և անսահման համբերութիւն. այդ քարոզը բղխում է անմիջիթար իրականութիւնից և փորձից քաղած այն մանր փիլիսօփայութիւնից՝ թէ երջանկութիւնն ու թշուառութիւնը քոյր ու եղբայր են—անբաժան, միասին և զուղընթաց, որպէսզի Աստծուն մտքից չը զցենք: Գիքօն իր անհուն համբերողութեամբ՝ նաև ծայրայեղ ու աներեակայելի սառն է, դանդաղ ու անտարբեր. նրա համար կենսականը, էականն ու բոլորովին երկրորդականը, կարևորն ու մանրամանը անտեղին հետաքրքրութեան միենոյն աստիճանի վրայ են կանգնած և այս անտարբերութիւնը անհասկանալի ու անհաւատալի ծայ-

22

րայեղութեան է համուռմ. ամբողջընտանիքի վրայ ասես սուգ է իջել, բոլորին հաւասարապէս խեղում է այդ անել դրութիւնը՝ և ահա այս ելքի միկակ բանալին գտնուած է՝ դա Գիքօնի իեռին է. և ի՞նչ... նա փոխանակ իսկոյն ցնծանքով աւետելու այդ փրկարար լուրը՝ սառն անտարբերութեամբ «ծոծուցնում է», համբերութեան քարոզներ տալիս: Կան, այո, Գիքօնի նըման մօտաւոր չափով անտարբեր տիպեր, բայց Գիքօնիր չը կան: Նա այդ տեսակէտից մի անիրական չափազանցութիւն է, որի համար շատ տեղին է համբերութիւնից դուրս եկած Շուշանի խօսքը՝ թէ «եարար այս տեսակ էլ մարդ կը լինի».

Այսպէս տեսնում ենք, որ «Պէպօի» բոլոր գործող անձերը կենդանի, իրա-

կան, աշխոյժ տիպեր են, որոնք կանգնում են մեր առաջ իրենց էութեան ամբողջ մերկութեամբ—այնքան պարզ այնքան ճշտիւ և գեղարուեստագէտի հմտութեամբ ու կարող գրչով ստեղծագործուած:

«Պէպօն» իբրև գեղարուեստական ու գրական երկ մեր թատերագրութեան գոհարն է մինչև այժմ: Նա մի գեղեցիկ ամբողջութիւն է, որ չունի ոչ մի աչքի ընկնող պակասութիւն և ոչ աւելորդութիւն, չը պաճառաբանուած և թերի կամ կեղծ դրութիւններ ու գործողութիւններ, այլ մեծ վարպետութեամբ ու հոգեկան ճշտութեամբ մի հրաշակերտ գործ է, մի համաշափ ու ներդաշնակ գեղարուեստական ստեղծուածք, կենդանի, վառ և ճիշտ գոյներով գծուած:

Եւ «Պէպօն» մանաւանդ իր ժողովր-

դական աննման տիպերով մեր թատերագրութեան մէջ ոչ միայն առաջին, այլ և առանձնայատուկ տեղէ գրաւում: «Պէպօի» մէջ է առաջին անգամ անմահացել այսքան փայլուն կերպով ստորին զասի մաքուր մարդը իր հոգուու սրտի հարստութեամբ, իր ներքին աշխարհի գեղեցկութիւններով ու գանձրով:

«Պէպօն» սխալմամբ է կօմեղիա անուանուած. դա իսկապէս մի դրամա է լուրջ, ճնշող, դրամա: Կօմեղիայի տարրը դրա մէջ թերևս միայն թիֆլիսական բարբառն է:

«Պէպօն» Սունդուկեանի փառք ու պարձանքն է, նրա ստեղծագործող տաղանդի ու ստեղծագործութիւնների իսկական հայելին: Այս պիեսով է նա Սունդուկեանց. դրա մէջ երևան եկան նրա ամբողջ ստեղծագործող ոյժն ու

23



կարողութիւնը, նրա փայլուն տաղանդը: Կեանքը ճշտիւ դիտող, քննող ու վերլուծող ընդունակութիւններով և Պատօն» Սունդուկեանցին միանգամից մի քանի աստիճան բարձրացրեց, նրա համար միանգամից հմուտ գեղարուես-

տագէտի ու տաղանգաւոր զբականի  
մեծ հռչակ ստեղծեց թէ մեր և թէ նոյն  
իսկ օտարների մէջ:

Սունդուկեանցին կարելի է անուա-  
նել «Պէպօխ» հեղինակ:

1905 թ. Էջմիածին




ՀՀ Ազգային գրադարան



NL0380652

71.273

Գինն է 10 կղզ.



Թ. Ե. Ժ. Լ. Ա. Յ

Տպարան՝ Շեմբալիս, Գրաֆսկայա փող., 6.

1912